

ցիէն 1613ին ի Կարբի «զխարազնազգեացն զԹուժայ վարդապետն» :

ԺԱ. Գրիգոր վարդապետ, զոր Սաչատուր Երնջակցի եւ Ղուկաս Գառնեցի կը յիշատակէին, նոյն է հաւանօրէն Մովսէս կաթողիկոսի քնորդւոյն հետ (§ 3) :

ԺԲ. Փիլիպպոս եպիսկոպոս Բջնոյ : Վիեննայի Միլիթարեան Մատենադարանի Թ. 55 Աստուածաշունչի յիշատակարանին մէջ<sup>7</sup> Յովհաննէս Շոռօթեցի կ'արձանագրէ 1653ին Փիլիպպոս եպիսկոպոսի բերնէն. «Ի թուահաշուութեան արամեանս ազգի հազար ութսուներորդի (1631) ես Փիլիպպոս արհեպիսկոպոս ձեռնադրեալ ի մեծ եւ սրբազան Մովսէս կաթողիկոսէ եւ կրկին լուսաւորչէ տանս խաւարեալ ազգիս, որ եւ նորին հրամանաւ եղայ ի հռչակաւոր սուրբ աթոռոյս (Բջնոյ) Տիրամօր Աստուածածնիս սպասաւոր եւ տեսուչ ժողովրդեան վիճակի սորին : Եւ իմ եկեալ աստ՝ տեսի զանչինութիւն եւ զանբնակութիւն սուրբ աթոռոյս՝ միշտ այրեցեալ խորովէր լեարդ եւ սիրտ իմ : Ապա մեծաւ յուսով ապաւինելով յողորմութիւն ամենակալին, այն որ ասէ. Ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա. սկսաք միաբանս ժողովել ըստ չափու եւ արժանաւորութեան տեղոյս մեծի՝ թուով իրբեւ երեսուն, աւելի եւ ոչ սրկաս : Յետ որոյ կարողութեամբ եւ կամակցու-

<sup>7</sup> Տաշեան՝ Յուլիս, էջ 259—260 :